5.	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ LAW ЮРИДИЧЕСКИЕ НАУКИ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԲԱԶՄԱՉԱՓ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի ռեկտոր

Օբյեկտիվ աշխարհը բազմաչափ է, սակայն իր օբյեկտիվ բնույթով հանդերձ՝ այն յուրաքանչյուրի համար ծառայում է որպես սուբյեկտիվ ընկալման և վերարտադրության առարկա: Բազմաչափ են բնությունը, տիեզերքը, կյանքը, մարդն ու մարդու գիտակցությունը: Մարդը միաժամանակ և՛ կենսաբանական, և՛ բանական, և՛ կամային-զգայական, հոգևոր ու մարմնական էակ է, որի բազմակողմանի բնույթը դրսևորվում է ամենուր՝ սոցիալական գործունեության մեջ, մշակույթում, գիտության մեջ և այլ բնագավառներում: Անձի կենսագործունեության յուրաքանչյուր ոլորտում պահանջվում է տվյալ ոլորտին բնորոշ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ուրույն համակցություն: Այսպես, պետական ու համայնքային մարմինների ղեկավարման և կենցաղավարման համար իմացության ու կարողությունների տարբեր ‹‹հավաքածուներ›› են պահանջվում: Գիտելիքների և հմտությունների միանգամայն տարբեր պաշարներ են հարկավոր քաղաքական գործունեության ու հասարակական կամավոր աշխատանքների համար և այլն: Այսինքն՝ մարդու կենսագործունեության յուրաքանչյուր ոլորտ իրեն բնորոշ չափումները և իր համապատասխան սպասումներն ունի տվյալ ոլորտով զբաղվող սուբյեկտներից: Ակնհայտ է, որ մի ոլորտի իմացությունը կարող է օգնել մարդուն այլ չափումներով հարթությունում իրեն դրսևորելու: Բացի դրանից՝ կան ընդհանուր աշխարհայացքային գիտելիքներ, բարոյական նորմեր, էթիկական կանոններ, հանրաճանաչ ճշմարտություններ ու սկզբունքներ, արժեքային կողմնորոշիչներ, որոնք համընդհանուր բնույթ ունեն և անհրաժեշտ են սուբյեկտի գրագիտության, վարքագծային ակտիվության ու կարողությունների զարգացման համար: Այդ հիմքի վրա է կառուցվում անձի բազմաչափ

իմացությունը, այն է՝ մասնագիտական, լեզվական, բարոյաէթիկական, տեխնիկական, գեղագիտական, հաղորդակցական գրագիտությունը և գրագիտության այլ դրսևորումները, ինչպես նաև ձևավորվում են անհրաժեշտ սոցիալական հմտություններ: Իսկ ընդհանուր և մասնագիտական գիտելիքներ ու կարողություններ անձն ամբարում է կրթության ու դաստիարակության միջոցով, որոնք չեն սահմանափակվում որոշակի ժամանակահատվածով կամ չեն իրականացվում մեկ վայրում, կյանքի մի փուլում: Կրթությունը դադարել է լինել միայն դպրոցների, բուհերի, այլ ուսումնական հաստատությունների մենաշնորհ գործառույթը: Կրթությունն ընթանում է ողջ կյանքի ընթացքում և արդյունավետ է այնքանով, որքանով մարդը գիտակցաբար է մոտենում իր անձնային ու մասնագիտական աճի, ինքնակրթության, ինքնակատարելագործման և ինքնաիրացման խնդիրներին:

Իսկ ի՞նչ է կրթությունը: Քերթողահայր Մովսես Խորենացին դեռևս հինգերորդ դարում է տվել այս հարցի պատասխանը՝ ‹‹Կրթությունը ամեն ինչ է››: Ըստ Խորենացու՝ ‹‹Իմաստությամբ կարելի է հաղթել մեծ զորությանը: Իսկ անգրագիտությունը մեծ չարիք է: Անգրագիտությունը ինչ բան էլ ձեռնարկի, կկործանի մարդկային կյանքի ամրությունը: Բանականության արդյունքը խոհականությունն է: Ուրեմն, գեղեցիկ մտածողությամբ վառ ու բորբոք պահելով քո խոհականության կայծը՝ զարդարում ես բանականությունը››[1]:

Բազմաչափ հասկացություն է կրթությունը, որը անձի համար կրթության իրավունքի իրացման գործընթաց է և այդ գործընթացի արդյունք, հասարակության համար՝ կարևոր սոցիալական ոլորտ, հանրային մեծ արժեք ներկայացնող բնագավառ, իսկ պետության համար՝ ռազմավարական նշանակություն ունեցող համակարգ: Կրթության՝ որպես արժեքի նկատմամբ պատմականորեն ձևավորվել է երկու մոտեցում: Առաջին տեսակետի համաձայն՝ կրթությունը անձնական բարիք է, իսկ ըստ երկրորդ տեսակետի՝ հանրային արժեք: Նշված դիրքորոշումները հաշտեցրեց Վիլհելմ ֆոն Հումբոլդտը՝ կրթությունն իրավացիորեն համարելով և՛ անձնական, և՛ հանրային բարիք: Նա 1792 թվականին հրատարակեց ‹‹Պետության գործունեության սահմանների մասին›› աշխատությունը, որտեղ հիմնավորեց այն ‹‹ազատական›› տեսությունը, ըստ որի՝ պետությունը պարտավոր է հոգ տանել այնպիսի ‹‹բացասական›› բարիքների մասին, ինչպիսիք են անվտանգությունը, արտաքին թշնամիներից հասարակության պաշտպանությունը, խաղաղության ապահովումը և այլն, սակայն պետությունը չպետք է միջամտի կրթական համակարգի գործունեությանը, որը պետք է

[1]Տե՛ս Ս.Գրիգորյան, Ասույթներ, «Լուսաբաց» հրատարակչատուն, Երևան, 2006, էջ 179:

ամբողջովին ազատ լինի պետության հոգածությունից և ձևավորի անձի անհատականությունը (ինդիվիդուալիզմը)[1]: Կրթության առաքելությունն է ոչ միայն ձևավորել ազատ և պատասխանատու քաղաքացի, ապահովելով նրա՝ որպես անհատի ձևավորումն ու զարգացումը (ինդիվիդուալիզացիան), այլև նպաստել անձի՝ որպես հանրության անդամի կայացմանը (սոցիալիզացիային) և մասնագիտացմանը (սպեցիալիզացիային):

Անձի համար կրթությունը ներքին պահանջ է, զարգացման ձգտում, մղում՝ լրացնելու ինտելեկտուալ բացը, հետաքրքրությունների բավարարման միջոց, անձնային աճի երաշխիք, հասարակության համար՝ սոցիալական զարգացման հզոր գործոն, իսկ մարդկության համար՝ քաղաքակրթական նվաճում, քաղաքակրթության զարգացման խթան, արդյունք ու գրավական: Այն նորարարության աղբյուր է, գիտության «սպասավոր», միաժամանակ գիտական արդյունքների «սպառող»: Գիտության արդյունքները ծառայում են հանրությանը՝ ներդրվելով կրթական համակարգ, փոխանցվելով որպես նոր գիտելիք և ապահովելով իմացության նոր որակ:

Իրավունքի տեսանկյունից՝ որպես օբյեկտիվ հասկացություն՝ կրթությունը օրենսդրորեն կարգավորվող հարաբերությունների համակցություն է, որը ներառում է կրթության բոլոր աստիճանները՝ նախակրթարանից մինչև բարձրագույն մասնագիտական կրթություն: Մարդու առաջնային կրթությունն ու դաստիարակությունը սկսվում է ընտանիքում, ապա շարունակվում դպրոցում, այլ ուսումնական հաստատություններում, կոլեկտիվներում, սոցիալական տարբեր կառույցներում: Հատկանշական է, որ Իմանուիլ Կանտը ‹‹Ֆակուլտետների վեճը›› աշխատության մեջ ‹‹ներքևում››՝ ընտանիքներում, ընթացող կրթական գործընթացին հակադրում է ‹‹վերևից››՝ պետությունից բխող կրթական գործընթացը և նախապատվությունը տալիս է երկրորդին: Նա կողմնակից է պետությունից և եկեղեցուց գիտական վերնախավի (էլիտայի) ‹‹անկախացման›› (էմանսիպացիայի) գաղափարին[2]: Եթե Կանտը, Ֆիխտեն և ֆրանսիական լուսավորության շատ ներկայացուցիչներ կրթության ու անձի ձևավորման հարցում անվերապահորեն նախապատվությունը տալիս էին պետությանն ու հասարակությանը՝ չկարևորելով ծնողների դերը, ապա Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելը չի տալիս միանշանակ պատասխան՝ նկատի ունենալով

[1]Տե՛ս Гумбольдт Вильгельм фон. О границах деятельности государства // Гайм Р. Вильгельм фон Гумбольдт, М.: Издание К.Т.Солдатенкова, 1898:

[2]Տե՛ս Кант И. Спор факультетов // Кантовский сборник, Калининград: Калининградский государственный университет, 1999, էջ207-258:

խնդրի ողջ բարդությունը: ‹‹Իրավունքի փիլիսոփայություն›› աշխատության[1] § 239-ում նա նկատում է, որ դաստիարակության հարցերում սահման գծել ծնողների և քաղաքացիական հասարակության իրավունքների միջև շատ դժվար է[2]: Ելնելով ընդհանուր փիլիսոփայական ‹‹ռացիոնալիստական›› դիրքերից՝ նա թեև նախապատվությունը տալիս է հասարակությանը՝ որպես ‹‹համընդհանուր ընտանիքի», սակայն ընդգծում է նաև ծնողների ‹‹բնական›› իրավունքները, որոնք գտնվում են պետության և օրենքի պաշտպանության ներքո: Հատկանշական է, որ հենց այսպիսի մոտեցումն է արտացոլված Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործող Սահմանադրության մեջ: Հեգելը ‹‹Գիմնազիայի տնօրենի ճառեր››-ում գիմնազիայի ուսուցիչների անունից դիմում է պետությանն ու ծնողներին՝ որպես կրթության հարցերում վերջնական պատասխանատվություն կրողների: Նրա տրամաբանական մտահանգումը հետևյալն է. ‹‹Ուսումնական հաստատությունները գլխավորապես պետության սպասավորներ աճեցնելու համար են, ուստի այդ հաստատությունները պատասխանատու են կառավարության և ծնողների առջև››[3]:

Կարծում ենք, որ արդի կրթական հաստատությունները պատասխանատու են անձի, հասարակության ու պետության, իսկ հանրությունն ու պետությունն էլ իրենց հերթին պարտավորություններ ունեն ուսումնական կառույցների առջև: Այսպիսով, աճող սերնդի կրթության և դաստիարակության հարցում համատեղ պատասխանատվություն են կրում թե՛ ընտանիքը, թե՛ հասարակությունն ու պետությունը:

Անձի տեսանկյունից, սուբյեկտիվ իմաստով, կրթությունն արժեք է, անձնական ձեռքբերում, որն ունենալու համար մարդը օգտվում է կրթության իր սահմանադրական իրավունքից: Կրթական հարաբերությունների կողմ դարձած անձի համար սովորելը դառնում է ոչ միայն իրավունք, այլև պարտականություն, որի վերաբերյալ կնքվում է համապատասխան անհատական իրավական ակտ՝ պայմանագիր: Հեգելը հիմնավորում է, որ ‹‹կրթությունը նախ և առաջ մարդու՝ որպես անհատի պարտականությունն է ինքն իր առջև, և այդ պարտականությունը կայանում է նրանում, որ անհատն

[1]Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելի նշված աշխատության ամբողջական վերնագիրն է՝ ‹‹Բնական իրավունք և ակնարկներ պետության մասին ուսմունքի վերաբերյալ: Իրավունքի փիլիսոփայության հիմունքներ››:

[2]Տե՛ս Гегель Г.В. Ф. Философия права, М.: «Мысль», 1990, էջ 269:

[3]Տե՛ս Гегель Г.В.Ф. Работы разных лет(Философское наследие), Т.1, М.: «Мысль», 1972, էջ 411:

իր առանձին գոյությունը պետք է բարձրացնի դեպի իր համընդհանուր էությունը՝ կազմավորի ինքն իրեն››[1]:

Կրթությունը կարող ենք սահմանել նաև ժամանակային չափումներով: Այսպես, կրթությունն անցյալի իմաստավորումն է, ներկայի արժևորումը և հուսալի ապագայի երաշխիքը: Միաժամանակ այն ինստիտուցիոնալ համակարգ է, որը բաղկացած է բազմաթիվ ենթահամակարգերից՝ նախակրթարան, տարրական դպրոց, միջին դպրոց, ավագ դպրոց, բուհ՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Կրթությունը նաև գործառութային հասկացություն է, որը նշանակում է կրթության կազմակերպում, ուսուցման (դասավանդման) և ուսումնառության գործընթացների համակարգում: Սոցիալական որոշակի խմբերի համար կրթության ոլորտն ապահովում է զբաղվածություն. ուսումնական հաստատություններն ուսուցիչների, դասախոսների, այլ տարակարգերի աշխատակիցների համար գործատուներ են, իսկ սովորողների՝ աշակերտների և ուսանողների համար՝ որոշակի ժամանակահատվածի ընթացքում կրթական ծառայություններ մատուցող, նորմատիվ ուսուցում ապահովող և համապատասխան փաստաթղթերի միջոցով արդյունքներն արձանագրող և հավաստող կառույցներ:

Կրթությունը պաշտոնական գործընթաց է, որը բնութագրվում է որոշակի նորմատիվ տևողությամբ, հստակ սահմանված չափանիշներով, արդյունքների արձանագրմամբ, ատեստատի կամ դիպլոմի շնորհմամբ: Տարբերում ենք նաև ոչ պաշտոնական կրթական գործընթաց կամ ոչ ֆորմալ կրթություն, ինչպես նաև ինքնակրթության անընդհատ գործընթաց (ինֆորմալ կրթություն): Ուսումը ներառում է թե՛ տեսական, թե՛ գործնական բաղադրիչներ: Եվ պատահական չէ, որ Հեգելը կրթությունը բաժանել է տեսական և գործնական մասերի: Հեգելյան մեկնաբանությամբ՝ տեսական կրթությունը ներառում է գիտելիքների բազմազանությունը, համընդհանուր դիրքորոշումները, իրերի և օբյեկտների մասին դատողությունները՝ առանց սուբյեկտիվ տեսակետի և շահի: Գործնական կրթությունը ենթադրում է անձի կոչման և անհատական հատկանիշների հաշվառում: Իսկ առավել բարձր իմաստով կրթությունը սկսվում է միայն այն պահից, երբ անհատը նախ ընտանիքում, ապա պետությունում ներգրավվում է ‹‹սուբստանցիոնալ››՝ էական, հիմնարար հարաբերությունների մեջ[2]: Այսպիսով, կրթությունը որպես պարտադիր պայման ներառում է համագործակցությունը, որը միավորում է բազմաթիվ սուբյեկտների և ծավալվում է ուսուցանող-ուսումնառող հարաբերությունների (ուսուցիչ-աշակերտ, դասախոս-ուսանող) ձևով: Հասարակության զարգացման արդի պայմաններում կրթությունը դադարել է

[1]Նույն տեղում,էջ 49:
[2]Նույն տեղում, էջ 60-63:

սուբյեկտ-օբյեկտային հարաբերություն լինելուց, որտեղ սուբյեկտը ուսուցանողն է, իսկ վերջինիս ներգործության օբյեկտը պասիվ հայեցողի կարգավիճակում գտնվող ուսուցանվողը: Մեր օրերում աշակերտակենտրոն կամ ուսանողակենտրոն կրթության փիլիսոփայությունը սովորողին վերապահում է ակտիվ դեր, ով ուսման ընթացքում ոչ թե պատրաստի ճշմարտություններ է յուրացնում, այլ ուսուցչի կամ դասախոսի հմուտ ուղղորդմամբ բացահայտումներ կատարում, ինքնուրույն և կոլեկտիվ ուսուցման ձևերով ու մեթոդներով հետազոտություն իրականացնում, սովորում մտածել ու տրամաբանել, համեմատել ու վերլուծել, մասնավորեցնել ու ընդհանրացնել, մտնել կյանք ու կյանքի մեծ ‹‹արհեստանոցում›› փորձեր կատարել և արդյունքում օգտակար գիտելիք ձեռք բերել՝ այլևս այն չմոռանալու և կյանքում կիրառելու պայմանով:

Կրթությունը ծառայությունների յուրահատուկ ոլորտ է, որտեղ ծառայությունների ‹‹պատվիրատուն››, շահառուն, նաև «սպառողն» ու գնահատողը սովորողն է, ով նաև սովորողակենտրոն (աշակերտակենտրոն, ուսանողակենտրոն) միջավայրի ձևավորման ու զարգացման ակտիվ մասնակիցն է:

Սովորողները պետք է հանդես գան որպես որակյալ կրթության պահանջատեր, կրթական համակարգի առաջմղիչ ուժ, զարգացման երաշխավոր:

Որակյալ կրթությունն ու դաստիարակությունը նպաստում են ակտիվ ու պատասխանատու քաղաքացու ձևավորմանը, ով ունակ է վարելու արդյունավետ կյանք, ունենալու առողջ ապրելակերպ, պաշտպանելու սեփական և հարգելու այլոց իրավունքները, լինելու հանդուրժող, գնահատելու ազգային արժեհամակարգը և կայացնելու ճիշտ որոշումներ: Կրթության առաջնային խնդիրն է ոչ թե մարդուն սկուտեղի վրա մատուցել գիտելիքներ, հարկադրել դրանք մեխանիկորեն մտապահել, ապա վերարտադրել, այնուհետև մոռացության մատնել, այլ զարգացնել անձի բնատուր ընդունակություններն ու հնարավորությունները, ինքնուրույն մտածողությունը, ստեղծագործական կարողությունները, ապահովել նրա սոցիալական ինտեգրումը, ես-ի ինքնաարտահայտումը, իրավիճակին ու կենսական պայմաններին համապատասխան վարքագծային նոր մոդելների մշակումն ու կենսագործումը:

Կրթության համակարգի խնդիրն է մի կողմից բացահայտել և բավարարել անձի կրթական կարիքները, իսկ մյուս կողմից՝ ուսուցումը և կրթական գործընթացի արդյունքները համապատասխանեցնել հանրության ակնկալիքներին, աշխատաշուկայի կարիքներին, գործատուների պահանջներին, ինքնազբաղ ձեռնարկատեր դառնալու պայմաններին՝հաշվի

առնելով համաշխարհային զարգացումները, համադրելով ազգային և համամարդկային արժեքները:

Կրթությունը խնդիր ունի զարգացնելու անձի միտքը, հիշողությունը, դիտողականությունը, ինտելեկտը, վերլուծելու, տրամաբանելու, եզրահանգումներ կատարելու, ցանկացած իրավիճակում արագ կողմնորոշվելու ու ճիշտ որոշումներ ընդունելու և մտավոր այլ կարողությունները:

Կրթությունը կոչված է զարգացնելու անձի ստեղծագործական ներուժը, զինելու անհրաժեշտ գործիքակազմով՝ ողջ կյանքում շարունակական կրթության ու զարգացման համար: Անընդհատ կրթության շնորհիվ և արդյունքում անձը դառնում է բազմագրագետ մարդ, բարձրանում է նրա ինքնագնահատականը, ավելանում ինքնավստահությունը: Կրթության միջոցով են զարգանում անձի ինքնաարտահայտման կարողությունը, ինքնահրացման ունակությունն ու հաղորդունակությունը: Կրթությունը զարգացնում է անձի սոցիալական կարողությունները, արդյունավետ գործելու, կենսական հանգամանքներին հարմարվելու և իրավիճակն իրեն հարմարեցնելու ունակությունները, ճանաչողական (կոգնիտիվ), հուզական (էմոցիոնալ), գործնական (պրակտիկ), գեղագիտական (էսթետիկ), մարմնական (կինեսթետիկ), սոցիալական ինտելեկտը:

Որակյալ կրթությունը ձևավորում է կյանքի հմտություններ, առողջ ապրելակերպի մշակույթ, բարեկիրթ վարվեցողություն, գեղագիտական ճաշակ և անձի մասնագիտական որակները: Նրա շնորհիվ անձի մեջ առավել ակնհայտ են դրսևորվում առաջնորդի հատկանիշները: Այն զարգացնում է ինչպես անձի անհատական, այնպես էլ ազգային ինքնագիտակցությունը:

Իմանուիլ Կանտը գտնում էր, որ կրթությունը մարդկության ‹‹բնական տվյալների›› զարգացումն է[1]: Այն հարցին, թե ինչ է լուսավորությունը, Կանտը պատասխանում է. ‹‹Մարդկային ցեղի դուրս գալը անչափահասության վիճակից, որում նա հայտնվել է իր մեղքով››, իսկ ‹‹անչափահասությունը մարդկանց անկարողությունն է օգտվելու իր բանականությունից՝ առանց որևէ մեկի ղեկավարման[2]››: Ֆիխտեն նույնպես կարծում է, որ կրթությունը մարդու արդեն իսկ ունեցած ‹‹բնական տվյալների›› զարգացումն է՝ միաժամանակ նշելով, որ ‹‹գիտությունն ինքը մարդկային կրթության ոլորտ է»[3]: ‹‹Մարդու գեղագիտական դաստիարակության մասին նամակներ››-ում Շիլլերն այն

---

[1]Տե՛ս Кант И. Сочинения в 4-х томах на немецком и русском языке, Т.1, М.: «Ками», 1994, էջ 84-85:

[2]Նույն տեղում, էջ 126-127:

[3]Տե՛ս Фихте И.Г. О сущности ученого и ее явлениях в области свободы // Наставления к блаженной жизни, М.: Канон, 1997, էջ 329:

տեսակետն է արտահայտել, որ ֆիզիկական մարդիկ ապրում են ‹‹կարիքի պետությունում››, որը պետք է վերածվի ‹‹բանականության պետության››, իսկ ‹‹բանականության պետություն›› կարող են ստեղծել միայն նոր մարդիկ՝ ազատ ու բարոյական անհատները: Եվ որպեսզի կոչումով ‹‹դաստիարակները›› կարողանան ազգ ձևավորել, իրենք պետք է կիրթ լինեն[1], այսինքն՝ դրվում է որակական նոր նկարագիր ու նոր մտածողություն ունեցող անձանց կրթության ու դաստիարակության հարցը, որը, կարծում ենք, արդիական է նաև մեր օրերում: Գերմանացի մտածողները խնդիր էին դնում հեղափոխությունը (ռևոլյուցիան) փոխարինել էվոլյուցիայով՝ սահուն, աստիճանական զարգացմամբ, և խնդրի լուծումը տեսնում էին հենց կրթության ոլորտում: Այդ տեսակետի կողմնակիցներ էին Կանտը, Ֆիխտեն, Շիլլերը: Կրթության մասին համալիր հայեցակարգ է մշակել Գերմանայի դպրոցական համակարգի մոդելի բարեփոխիչ և Բեռլինի համալսարանի հիմնադիր Ֆրիդրիխ Դևիդ Շլեյերմախերը, որի համար ընտանիքը և պետությունը սոսկ արտաքին կապերով կապված անհատների համակցություն չէ: Անհատ անձինք փոխկապված են միմյանց ընտանիքի, հայրենիքի ու պետության հանդեպ տածած ընդհանուր սիրով, ուստի և հանրային միասնություն կազմելով՝ հանդես են գալիս որպես ‹‹միասնական էակ››, ում կյանքի առաջնային պայմանը սերն է: ‹‹Սիրով շաղկապված և անընդհատ կատարելության ձգտող հաղորդակցությունը հենց կազմում է կրթության էությունը››,-կարծում է Շլեյերմախերը[2]:

Կրթությունը կարող ենք համեմատել յուրահատուկ ‹‹լուսամուտի›› հետ, որի շնորհիվ լույսը մուտք է գործում մարդու կյանք իմաստության լույսի ձևով: Դեռևս վաղքրիստոնեական մտքի պայծառ ներկայացուցիչներ Կլիմենտ Ալեքսանդրիացին և Հովհան Ոսկեբերանը պատմության մեջ կարևորել են հենց ‹‹կրթական, բարեփոխիչ›› գործընթացը, որն առաջնորդում էր Քրիստոսը և որը պիտի ավարտվի համընդհանուր ‹‹վերափոխմամբ ու վերածնունդով››[3]: Իսկ աշխարհի արարումը համարել են հավերժական գաղափար՝ գործողության մեջ, Արարչի մտադրություն՝ իրականության վերածված, վերին ստեղծագործություն: Կրթությունը պետք է արթնացնի և շարժման մեջ դնի, ձև ու մարմին հաղորդի մարդու ստեղծագործ մտքին ու երևակայությանը, ասել է, թե՝ արարման հավերժական գաղափարին:

---

[1]Տե՛ս Шиллер Ф. Письма об эстетическом воспитании человека // Собрание сочинений, Т.6,Статьи по эстетике, Москва: Государственное издательство художественной литературы, 1957, էջ 251-358:

[2]Տե՛ս Шлейермахер Ф. Речи о религии. Монологи, Спб.: Алетейа, 1994, էջ 38:

[3]Տե՛ս Сапрыкин Д.Л.Значение и смысл понятия «Образования» (на примере немецкой философии конца XVIII – началаXIX вв) // Вестник МГУ, Серия 7, Философия, №1, 2008.

Արարչագործության թագն ու պսակը մարդն է, ով օժտված է արարելու կարողությամբ, իսկ կրթությունը նպաստելու է մարդու կողմից իր ստեղծագործ էության բացահայտմանը և իր արարչագործ առաքելության լավագույնս իրականացմանը: Կարծում ենք, որ կրթությունը նաև մարդու կողմից իրեն տրված ազատության լիարժեք գիտակցման և դրա ‹‹տնօրինման›› կարևորագույն նախապայման է: Այսպիսով, կրթության էություն է համարվում մի դեպքում սիրով շաղախված հաղորդակցությունը, մյուս դեպքում՝ ստեղծագործական ներուժի բացահայտումը, երրորդ դեպքում՝ ազատության գիտակցված տնօրինումը և այլն: Իսկ ո՞րն է ի վերջո կրթության էությունը: Մեր կարծիքով՝ կրթության՝ որպես բազմաչափ արժեքի էությունն են կազմում բոլոր նշված հայեցակարգային մոտեցումները՝ միասին վերցրած:

Իսկ ինչպիսի՞ խնդիրներ են ծառացած կրթական համակարգի առջև մեր օրերում, կրթությունն արդյոք պետք է զե՞րծ լինի պետության միջամտությունից, թե՞ ոչ: Կարծում ենք՝ չի կարող ամբողջությամբ զերծ լինել, քանի որ կրթական ոլորտի հարաբերությունները ենթակա են պետության կողմից նորմատիվ իրավական կարգավորման, որոշակի՝ ոչ ամբողջական ֆինանսավորման, իրավական, ֆինանսական ու կազմակերպական վերահսկողության, սակայն կրթական համակարգն ունի ակադեմիական ինքնավարություն և իրավասու է ձևավորել կրթության բովանդակությունը, առաջարկել ուսուցման նոր մեթոդներ, լուծել այլ խնդիրներ:

Արդի հիմնախնդիրներն են կրթության որակի բարձրացումը, կրթության մատչելիության, համընդհանուր, հավասարապես հասանելիության ապահովումը, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացումը և կրթության բովանդակության հարստացումը, ուսուցման տեսական ու գործնական բաղադրիչների ճիշտ հարաբերակցության պահպանումը, ուսուցման մեթոդների արդիականացումը, կրթական տեխնոլոգիաների բազմազանեցումը, կրթության նյութատեխնիկական, դիդակտիկ հիմքերի ապահովումը, ուսման էլեկտրոնային միջավայրի զարգացումը և էլեկտրոնային գործիքների կիրառումը:

Խնդիրներ են նաև կրթական հարաբերությունների հստակ իրավական կարգավորումը, կրթության ոլորտի ապակենտրոնացված կառավարումը, ֆինանսավորման համակարգի բարեփոխումը և այլն:

Ոչ վաղ անցյալում գիտելիքն ինքնին արժեք էր, և կրթական գործընթացը ծառայում էր նոր սերնդին գիտելիքի փոխանցմանը: Գիտելիք կրող անձն իր սոցիալական միջավայրում մեծ հարգանքի էր արժանանում: Երրորդ հազարամյակում գրագետ լինելը կամ գիտելիք ունենալը բավարար չէ, հարկավոր է ստանալ և կիրառել օգտակար գործողության գործակից ունեցող գիտելիք: Ֆիզիկայի դպրոցական դասագրքից մեզ հայտնի է, որ

‹‹Կատարած աշխատանքը միշտ գերազանցում է այն աշխատանքին, որն իսկապես անհրաժեշտ է դրված նպատակին հասնելու համար: Դրան համապատասխան՝ միմյանցից զանազանում են ծախսած աշխատանքը և օգտակար աշխատանքը››[1]: Մեջբերված սահմանումը արտապատկերելով կրթության ոլորտ՝ կարող ենք արձանագրել, որ

1.տարբերվում են պարզապես ձեռքբերված գիտելիքը և օգտակար գիտելիքը,

2. անհրաժեշտ է ուսումնական հաստատություններում ծախսված ժամանակի միավորի ընթացքում ձեռք բերել ոչ թե սոսկ գիտելիք, այլ օգտակար գիտելիք, որը պիտանի կլինի մասնագիտական աշխատանքում, անձի կենսագործունեության տարբեր ոլորտներում, որի շնորհիվ կծնվեն նոր գաղափարներ, անձը կկարողանա ինքնադրսևորվել, ստեղծագործել ու նոր լուծումներ գտնել, կյանքի տարբեր իրավիճակների ու երևույթների նկատմամբ համարժեք վերաբերմունք դրսևորել ու ճիշտ գնահատական տալ, իրավիճակներ, հարաբերություններ ու համակարգեր մոդելավորել, խելամտորեն ապրել ու գործել: Դա նշանակում է, որ այսօր կրթության համակարգի առջև ծառացած լուրջ մարտահրավեր է գտնել ճիշտ ձևաչափեր ու մեթոդներ՝ սովորողներին զինելու օգտակար գործողության գործակից ունեցող գիտելիքներով: Անարդյունավետ կրթական գործընթացի մասին են վկայում այն փաստերը, որ թեև աշակերտները տարիներ շարունակ դպրոցում սովորում են օտար լեզու, սակայն դպրոցն ավարտելուց հետո շրջանավարտների մեծ մասն այդպես էլ չի տիրապետում օտար լեզվին, կամ սովորում են մաթեմատիկա, բայց իրական կյանքում չեն կարողանում մաթեմատիկական գործողություններ կատարել և այսպես շարունակ:

Նորմատիվ կարգավորվող (ֆորմալ) կրթությունը պետք է ողջ կյանքի համար կրթության հուսալի հիմք ձևավորի, դառնա ամուր հենարան՝ անձի ինտելեկտուալ աճի համար, դառնա ‹‹անհարմարավետության գոտում›› հայտնված անձի ճիշտ կեցվածքի ու վարքագծային ակտիվության պատվարը: Հատկանշական է, որ Անտուան դը Սենտ-Էքզյուպերին, դիմելով երիտասարդ ամերիկացիներին, ասել է. ‹‹Եթե դուք չեք ուզում ապրել մեռած գաղափարներով, դուք պետք է անհապաղ նորոգեք գաղափարները…»[2]: Այսինքն՝ մեր պարտքն է նորոգել կրթական համակարգի գաղափարական հիմքերը՝ նոր բովանդակություն ու որակ հաղորդելով կրթությանը: Հարկ ենք համարում ընդգծել այն գաղափարը, որ որակյալ կրթությունն անձի վրա ունենում է ուղղակի և անուղղակի դաստիարակիչ ազդեցություն, այսինքն՝

---

[1]Տե՛ս Գրոմով Ս.Վ., Ռոդինա Ն.Ա., Ֆիզիկա, 7-րդ դասարան, «Անտարես», Երևան, 2013:
[2]Տե՛ս Անտուան դը Սենտ-Էքզյուպերի, Ուղերձ երիտասարդ ամերիկացիներին, 1942 // http://grapaharan.org:

դրսևորվում է որպես դաստիարակիչ կրթություն, որը ներառում է ազգային, ռազմա-հայրենասիրական, քաղաքացիական, իրավական, բնապահպանական, հոգևոր-մշակութային, բարոյա-էթիկական, գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական կրթությունն ու դաստիարակությունը, կյանքի հմտությունների ձևավորումը, անձի բազմակողմանի զարգացումը:

Որակյալ կրթության ապահովման համար անհրաժեշտ է մասնագիտական կրթական ծրագրերի արդիականացում, կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում, որակավորումների ազգային շրջանակի կատարելագործում, որակավորումների ոլորտային շրջանակների մշակում և կիրառում, սովորողների խելամիտ ուսումնական ծանրաբեռնվածության սահմանում, այլընտրանքային փորձարարական, նորարարական ծրագրերի մշակում և արդյունավետ իրականացում, կրթական ենթակառուցվածքների բարելավում, գրավիչ, անվտանգ ու ապահով կրթական միջավայրի ստեղծում:

Բուհական համակարգի գերակա խնդիրներից է կրթության և հետազոտության շաղկապումը, կրթական համակարգի փոխկապակցումը գիտական համակարգի և աշխատաշուկայի հետ, որպեսզի պատրաստվեն գիտելիքներով զինված, գործատուի պահանջները բավարարող և մասնագիտական համապատասխան հմտությունների տիրապետող մասնագետներ:

Աշխատաշուկայի կարիքները հաշվի առնող, որակի չափանիշներին համապատասխանող մասնագիտական կրթության ապահովման նպատակով անհրաժեշտ է դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերի պարբերաբար իրականացում, դասախոսներին զինում նոր մեթոդներով և տեխնոլոգիաներով: Կրթական համակարգում պետք է սահմանել առաջընթացի առանցքային ցուցիչներ, բարձրացնել ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետությունը, մշակել և ներդնել ռեսուրսահայթայթման նոր կառուցակարգեր, ապահովել բազմախողովակ ֆինանսավորում, բարձրացնել հանրության առջև դպրոցների և բուհերի պատասխանատվությունը, միաժամանակ ապահովել ուսումնական հաստատությունների նկատմամբ սոցիալական վերահսկողություն, կիրառել կոռուպցիոն վտանգների կանխարգելման կառուցակարգեր, կրթական հաստատություններում արմատավորել որակի մշակույթ, ակադեմիական ազնվության սկզբունքներ և բարեվարքության (էթիկայի) կանոններ: Պետք է առաջնորդվել այն գաղափարախոսությամբ, որ լայն առումով կրթությունը ձևավորում է անձի միտքը, կամքը, բնավորությունը,

նպաստում է հանրության ու պետության առաջընթացին, գիտության զարգացմանը:

Օրենսդրական սահմանմամբ՝ ‹‹կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար››[1]: Գտնում ենք, որ ‹‹Կրթության մասին›› ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված կրթության վերոնշյալ սահմանումն ամբողջական չէ, քանի որ չի անդրադառնում կրթության այնպիսի գործառույթին, ինչպիսին է նոր գիտելիքի ստեղծմանը նպաստելը:

Հայաստանի Հանրապետությունում օրակարգային խնդիր է կրթության նորմատիվ իրավական հիմքերի կատարելագործումը: Մեր երկրի կրթական համակարգի օրենսդրական հիմքերն են կազմում ՀՀ Սահմանադրությունը, կրթությանը վերաբերող միջազգային իրավական ակտերը, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Հանրակրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումները, ՀՀ կրթության ոլորտի գերատեսչական ակտերը, ուսումնական հաստատությունների կանոնադրություններն ու ներքին ակտերը: Մեր կարծիքով՝ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նման բազմազանությունը չի նպաստում կրթության ոլորտի հարաբերությունների հստակ իրավական կարգավորմանը, այլ առաջացնում է հակասություններ և տարընթերցումների ու թյուրըմբռնումների տեղիք տալիս: Ուստի առաջարկում ենք Հայաստանի Հանրապետությունում մշակել կրթության ոլորտը կարգավորող մեկ միասնական նորմատիվ իրավական ակտ՝ ՀՀ կրթական օրենսգիրք:

Այսպիսով, կրթությունը բազմաչափ հասկացություն է: Այն և՛ անձնային, և՛ հանրային, և՛ համապետական, և՛ համամարդկային արժեք է: Կրթությունը՝ որպես անձնօգուտ և հանրօգուտ գործունեության տեսակ, ունի իր բազմակի առաքելությունը՝ ապահովել անձի դաստիարակությունն ու համակողմանի զարգացումը, բավարարել հասարակության կրթական կարիքները, սպասարկել տնտեսության պահանջները, ծառայել ազգային ու համամարդկային շահերին:

Բանալի բառեր՝ *կրթություն, մասնագիտական կրթություն, գիտելիք, կարողություն, հմտություն, ուսումնառություն, դասավանդում, բազմաչափ գրագիտություն:*

---

[1]Տե՛ս ‹‹Կրթության մասին›› ՀՀ օրենք // ՀՀ ՊՏ, 1999.05.14/12 (78):

EDUCATION AS A MULTIDIMENSIONAL CONCEPT

HAKOBYAN RUZANNA
Doctor of Law, Associate Professor
Rector of Gavar State University

The article is dedicated to education as a multidimensional concept. Education is viewed as an institutional system, a process of learning and teaching, constitutional human right, public welfare, and at the same time as an essential public sector. Formal, non-formal and informal forms of education are discussed. The philosophical basis, as well as the essence and historical significance of education are reflected in the article. Additionally, the current issues of the education system of the Republic of Armenia are also presented.

Key words: education, vocational education, knowledge, ability, skill, learning, teaching, multidimensional literacy.

ОБРАЗОВАНИЕ КАК МНОГОМЕРНОЕ ПОНЯТИЕ

АКОПЯН РУЗАННА
Доктор юридических наук, доцент,
Ректор Гаварского государственного университета

Статья посвящена образованию как многомерному понятию. Образование рассматривается как институциональная система, процесс обучения и преподавания, конституционное право человека, общественное благо и одновременно важнейший государственный сектор. Обсуждаются формальные, неформальные и информальные формы обучения. В статье представлены философские основы образования, а также сущность и историческое значение образования. Вместе с тем рассматриваются актуальные проблемы системы образования Республики Армения.

Ключевые слова: *образование, высшее образование, знания, умения, навыки, обучение, преподавание, многомерная грамотность.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 09.03.2019թ.:
Հոդվածը գրախոսվել է 07.04.2019թ.: